



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2015 թվականի N 542 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 861 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
70-րդ հոդվածի 5-րդ մասի՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի դեկտեմբերի 10-ի
«Հայաստանի Հանրապետության վարչապետի խորհրդատանքի ձևեր սահմանելու մասին» N 861
որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման 1-ին կետը «Թանկարժեք» բառից առաջ լրացնել «շքանշան (N 3 ձև)» բառերով.

2) որոշմամբ հաստատված կարգի՝

ա. 1-ին կետը «Թանկարժեք» բառից առաջ լրացնել «շքանշանով, հուշամեդալով» բառերով,

բ. 11-րդ կետը «Թանկարժեք» բառից առաջ լրացնել «շքանշանը» բառով,

գ. 11-րդ կետը լրացնել «Ձև 3»-ով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող
օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ԱՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. հունիսի 26
Երևան



Հավելված
ՀՀ վարչապետի 2015 թ.
հունիսի 28 -ի N 542 -Ն
 որոշման


Ձև 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
ՇՔԱՆՇԱՆ



Շքանշանը պատրաստվում է 925 հարգի արծաթի համաձուլվածքից, որի չափերն են 85 X 85 մմ : Քաշը ոչ պակաս քան 120 գրամը: Ոսկեպատ՝ 999.9 հարգի 5 միկրոն: Այն իրենից ներկայացնում է քառաթև ճառագայթաձև բազմանկյուն, որի բոլոր ճառագայթները դեպի կենտրոն ուռուցիկ են: Կենտրոնում պատկերված է շեղանկյուն, որի անկյունային մասերում են 4 կապույտ էմալով արծնաձևավոր գնդիկներ: Շեղանկյան կենտրոնում շրջանաձև հարթակի մեջ տեղադրված է ՀՀ կառավարության շենքի ռելիեֆային պատկերը, որի շուրջն ուռուցիկ շրջանաձև տառերով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ >> և «<Prime Minister of the Republic of Armenia>> բառերը: Շքանշանի կորաձև ներս ընկած հատվածներն արծնաձևավոր են կապույտ գույնի սառն արծիձուլ:

Շքանշանը դարձերեսի կողմից ունի կապույտ ժապավեն՝ պարզևատրվածին հանձնելու համար և համարակալվում է:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ

ՈՐՈՇՄԱՄԲ

Պարգևատրվել է
Հայաստանի Հանրապետության
վարչապետի շքանշանով
Շքանշան՝ _____
Հայաստանի Հանրապետության
վարչապետ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ



Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ